

առանց ինչ աւելաբանութեան կարող եմք ասել,  
թէ Հայք միայն 'ի սկզբանէ ընկերութեանց աշ-  
խարհի մինչեւ ցարդ կացին ականաւոր վաճառա-  
կանք արևելից:

Բայց «Ոչ միայն արևելետն վաճառականութե  
» տեարք եղեն Հայք, ասէ Մարթինիէ, այլ մասն  
» մեծ ունին և յեւրոպեան քաղաքս » : Առ այս  
շնորհապարտ համարին զանձին՝ Ըահաբասայ, որ  
անբաւ աղիտիւք լցեալ զհայաստան, 'ի ձեռն Հայ-  
ոց հոգացաւ բարգաւաճել զաշնարհն վաճառա-  
կանութեամբ, 'ի նոսա յանձնեալ զմետաքս և ըզ-  
կերպաս ծաւալել յԵւրոպ: Յառաջնմէ իսկ դա-  
շին կուեալ էր Ռուգինեանց ընդ. Վենետիկոյ և  
Գենուայ, և 'ի վաղուց ևս 'ի տասներորդ դարէ  
հետէ կարծեմծանօթացեալ մերոցն ընդ. Վենետ-  
իշիս 'ի Տրապիզոն, յորժամ ընդ Յունաց անդր  
գնային: Խաչակիրք կրկին ծանուցին Եւրոպայ  
զյաղողութիւն ազդիս յայն արուեստ. այլ յոր-  
ժամ տէրութիւն 'ի սպառ բարձաւ 'ի նմանէ, և  
Ըահաբաս ձեռնուտու եղել, ազատագոյն ևս յա-  
ռաջ խաղացին Հայք յաշխարհս բարգաւաճս, և  
վաճառականօք մերովք լցան Հռոմէ Փլորենտիա,  
Ռոտինէ, Շիմինի, Հռաւեննա, Անքոնա, Պիսա,  
Վենետիկ և ամենայն Խտալիա: Լէհատուան ասպըն-  
ջական եղեալ գաղթականաց մերոց՝ մեծ աքայլ  
յառաջ ընթացաւ յարուեստս և 'ի քաղաքական  
բարեզարդութիւնս. թէրակղզին Ազախու ժողո-  
վեալ զնոսին՝ կրկին արծարծեցաւ 'ի բորբոքն յայն  
զոր արկեալ էր Գենուացւոց. Թաթարք՝ նոր Ճա-  
նապարհս օգտից ուսան 'ի վլուարնեցեացն Անուոյ.  
հիւսիսայինն Գերմանիա Ճոխանայր յառատու-  
թենէ Հայոցն եկելոց 'ի տօնավաճառս իւր, և նո-  
քքը կրթէր 'ի վաճառականութեան արուեստին,  
ասէ ոմն մատենացիր. իսկ հարաւայինն գործակ-  
ցութեամբ մերոցն ստացաւ զմեծ փարթամութի:  
Ռուսաստան 'ի ձեռն Հայոց ծաղկէր, Հոլանտա  
ՀՀայն գտանէր իւր մտէրիմ գործակից. թէրակղ-  
զին իրերնեան ձեռն տուեալ 'ի Հայն՝ տանէր զնա  
'ի խորագոյն սահմանս ամերիկեան և ասիական  
աշխարհաց. Գաղղիս 'ի հեռուստ մեծարանս ըն-  
ծայէր և հրաւեր կարդայր նոցա, փութայր և Ռի-  
շլիէ վանս ընդարձակս կազմել վասն բազմութե  
Հայոց: Եւ գու ինքնին նորդ կարգեգոն, ծովիշ-  
խանդ. Անդղիա, պարտական ես Հայոց և վասն  
վաճառականացն որ 'ի Հոնատոն, « Յորոց ընդ  
» խումբս բաղում անդամ բաղիսիմ, ասէ Խտիսըն,  
» 'ի շընէլ իսրամ ՚ի հրապարակին վաճառակա-  
» նաց », և վասն դիւրագոյն օրինակի հաշուեգիր  
տօմարին նոցա, և յաւետ վասն հնդկային վաճա-  
ռականութեանդ. զի ընդ. հետս Հայոց ուսար կո-  
խել զբաղում կողմանս Ճոխահարուստ աշխարհին:  
« Այնպէս իմն 'ի կողմանս յայսոսիկ հաստատեալ  
» է Հայոց զվաճառականութիւն իւրեանց, ասէ  
» Պիշնիկ, զի խոչ մեծ լիցի Եւրոպացւոց մուտ  
» գտանելոյ անդր, և անդամ Անդղիացւոց՝ որոց  
» 'ի Փեկու միայն է կալուած փոքրիկ » : Եւ յի-  
րաւի. զի մինչ սոքա հազիւ մուրացածոյ գործա-  
տունս ինչ կանգնէին յափունս Հնդկաց, Հայք 'ի  
Սիսամ. 'ի Մողոլ, 'ի Պենկալա, 'ի Յաւա, 'ի Կոշ-

զիս Փիլիպպեան, 'ի Մանիլիա, 'ի Պորնէով, 'ի  
Սումատրա, 'ի Սինկափուր, և 'ի շրջասփիւսո Ռէ-  
կիանու ընդ. հոյակապ եկեղեցեաց կառուցեալ  
ունէին զթանգարանս Ճոխութեան: Եւ ոչ զիս  
առեալ անդամոր, յառաջ անցանէին 'ի սահմանս  
Չինաց և 'ի սպառուածս Ռուսաստան աշխարհի,  
յԱմֆաերիսան, 'ի Մողուոք և 'ի Սիպէրիա, մինչ  
գեր, 'ի նմին ժամանակի և կարաւանկ նոցա հեր-  
ձեալ անցանէին ընդ. աւազակոյան ծով Սահրայ:  
Եւ մինչև ցայսօր ոչ միայն յամենայն կողմանս աշ-  
խարհի սփուեալ են Հայք, այլ են բազում տեղիք՝  
յորս Անդղիացիք և Հայք միայն մասնէն: Նշ-  
բարէ, քանի խոտիր է 'ի նոսա... Անդղիացին սան-  
ձակալ ալէաց Ռվիժիանու՝ զժուխ և գհողմն լծեալ  
ցամաքաթէն և ծովաշու կարացն՝ ակաղձուն գո-  
գովք սլանայ յորուստ երկրի. իսկ Հայն անդք և  
անստերունէ իբրև հետի և անթաց ընթացիք սահ-  
մանս վաճառականութեան իւրոյ գործէ զնոյն  
սահմանս Անդղիացւոց, մանաւանդ թէ զծակս  
աշխարհի:

Սակայն արժան և 'ի գէպ էր Հայոց առաջն  
վաճառականս աշխարհի լինել, որպէս կոչն և  
յԵւրոպացւոց շատք զնոսա. զի է նոցա ոգի սեպ-  
հական, բերումն բնատուր և անընդդիմակաց,  
յոյր սակս սացա ոմն. « Նովատ յաջողեցին Հայք  
ընդ ամենայն տէրութեամբ » : Է նոցա անխոնջ  
զօրութիւն 'ի տարաշխարհիկ ընթացս, երագա-  
միտ տեսութիւն 'ի կնճիռս հաշուոց, վսեմութիւն  
և ազնուութիւն բարուց՝ որով գէն դամարուես-  
տիք, անխարդախս հաւատարմութիւն՝ վկայեալ  
յամենեցուն, և 'ի վերայ ամենայնի՝ ազգակցութիւն  
ընդ. արևելեայս՝ որով սիրելի են նոցա, և համա-  
կրօնութիւն՝ որով յօժարագոյնս ընտելանան ընդ  
արևմտեայս :

(Աւարգն յառաջնիւսոյ: )

## ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

Սպանիայուոյ առանիւր:

Գէշ կեանկ անցրնովը՝ կեանկը վախով կ'անցնէ:  
Բարիք կ'ուզես նէ փնտուէ, բայց չարիք կրելու  
ալ սպասէ:

Ապէրախտ չեղող մարդուն ուզէլէն առաջնուուր:  
Լաւ է կոյր ըլլա՝ քան թէ աղէկը գէշ տեսնալ:  
Ան մարդն է հարուստ որ աղէկ բարեկամներ  
ունի:

Ծիտակ Ճամբէն քալէ, չես իյնար. իյնաս ալնէ  
շուտ կ'ելես:

Արդար վաստակն ալ կրնայ կորսուիլ. բայց մ-  
նիրաւ վաստակը՝ ինքն ալ կը կորսուի, զինքը պա-  
հողն ալ կը կորսունցընէ:

Գէշ իօսքին բայցած վէրքը աւելի իորունկ է  
քան թէ սուրդանակինը.